ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2022 թվականի № -Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի №60Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 33-րդ, 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի պահպանման ծախսերի մաս կազմող ֆոնդերի չափերը (մեծությունը) սահմանելու մասին» №60Լ որոշման՝

1) նախաբանում «16-րդ հոդվածի» բառերը փոխարինել «38-րդ հոդվածի» բառերով,
2) հավելվածի աղյուսակում «2160.0» թիվը փոխարինել «146160.0» թվով, «356182.0» թիվը՝ «500182.0» թվով,
3) հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 40-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվում է համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի, որը 2022 թվականին կազմում է 486255.4 հազար դրամ: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հատկացվող պահպանման

ծախսերի տարեկան մեծության և հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի, հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված ծախսերի_տարբերությունը 2022 թվականի համար կազմում է 364691.5 հազար դրամ, որից 8509.5 հազար դրամը, համաձայն օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի, կուղղվի հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
ապրիլի 2022թ.